,

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Djerahian, Levon T.. ,. 1927.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF.Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

Հրատարակութիւն ՀՈՐԻԶՈՆ գրատան թիւ, 2

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

## ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ԿԱԶՄԵՑ՝ ԼԵՒՈՆ ՃԷՐԱՀԵԱՆ

Ն Ր Ա Ժ Շ Տ Ա Գ Է Տ

Մ Ի Ա Կ  Կ Ե Դ Ր Ո Ն Ա Տ Ե Ղ Ի

«ՀՈՐԻԶՈՆ» ԳՐԱՏՈՒՆ

Օտոս. Մէղ. Ալեքսանտրիու, թիւ 62

ԳԱՎԱԼԱ - ՅՈՒՆԱՍՏԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒ

1937

Հրատարակութիւն ՀՈՐԻԶՈՆ գրատան, թիւ 2

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

## ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ԿԱԶՄԵՑ՝ ԼԵՒՈՆ ՃԷՐԱՀԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ

ՄԻԱԿ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

“ՀՈՐԻԶՈՆ„ ԳՐԱՏՈՒՆ

Օտու. Մէղ. Աղեքսանտրիու, թիւ 62

ԳԱՎԱԼԱ - ՅՈՒՆԱՍՏԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒ

1927

2008-258238



# ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ

### 1. ԱՂՈՒՈՐ ԱՂՋԻԿ

*խօսք Մ. ԶԱՐԻՖԵԱՆԻ* — *եղանակ Լ. ՃԷՐԱՀԵԱՆԻ*

Աղուոր աղջիկ, պզտիկ աղջիկ,
Ինծմէ հեռու,
Կը փայլեն քու վարդ ու յասմիկ,
Լոկ աստղերու . . .
Ի զո՛ւր ճակատդ ինծ կ'երկարես,
Որ համբուրեմ .
Թախիծն առաւ լոյսն աչքերէս,
Ու ես կոյր եմ . . .
Ու ես քեզի տես կը բերեմ,
Հոգի մը ծեր . . .
Աստղերուն տար, ես կը ներեմ
Համբոյրդ ու սէր . . .
Պզտիկ աղջիկ, անո՛ւշ աղջիկ,
Ինծմէ հեռու . . .
Կը փայլեն քու վարդ ու յասմիկ
Աստուածներու . . . :

### 2. ԱՀԱ ՄՕՏԵՑԱՆ

Ահա մօտեցան մահուան ժամերս,
Ալ չեմ իմանար բոլոր ցաւերս .
Կը զատուիմ քեզմէ, սիրուն ծաղիկս .
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերս :

Ի՞նչպէս պիտ՝ զատուիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս:
Համբերէ քիչ մը. ո՛վ մահ սոսկալի,
Չե՞ս մեղքընար դու սիրտն իմ ցաւալի:
Համբերէ քիչ մը, որ սէրս առնեմ,
Եւ այնուհետեւ հանգիստ քուն ընեմ:
Ի՞նչպէս պիտ՝ զատուիմ եւայլն...
Երբ կը մտածեմ մէկ երկու ժամէն,
Հողեր ու որդեր զիս պիտի ծածկեն,
Ամէն կողմերս ծակեն ծակծկեն,
Իմ մատղաշ մարմինս մատաղ պիտ՝ անեն:

## 3. ԱՀԱ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ՍԱՅԼԱԿԸ

Ահա սուրհանդակի սայլակը,
Ուղիղ ճամբով է դուրս թըռչում.
Եւ Վարդայի տխուր զանգակը
Կարի տակն է ղօղանչում:
Արքուն սայլորդն գիշերուայ դէմ,
Իր վիճակի վրայ տխրեց,
Եւ սիրուհու աչաց կարօտը
Նա տխրագին ձայնով երգեց:
«Կապոյտ աչեր, կապոյտ աչեր,
Կըտրիճիս կեանքը մաշեցիք.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք չար սսոխներ.
Ինչո՞ւ սիրտերս բաժնեցիք:
«Մընաս բարեաւ, իմ տուն հայրական —
Մընաս բարեաւ իմ սիրական.
Ես կը հանգչիմ զերթ բոց կըրակին,
Այս անբնակ դաշտի միջին»:
Արեւիս լոյսը խաւարել է.
Այս աշխարհում էլ որբ եմ ես.
Սրտիս կարօտը աղջկանս տեսնելու,
Մինչեւ ի մահ զրկուած եմ ես:

Այս որ ասաց՝ շարժեց մըտրակ,
Երեք ձիանց մէջքին խըփեց,
Իր սիրունու պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց:

## 4. ՍԻՐԱՀԱՐԸ

Ահա եկաւ յունիսն արծաթ,
Մութ ամպերուն ստուերեն,
Ահա նաւակն ալ գեղազարդ
Դուրս սահեցաւ ժայռերեն:
Անուշ հովիկ, փչէ յուշիկ
Ու դէպ ինձ բեր բիւր բիւր ալիք:
Նաւակին մէջ իմ գեղուհիս,
Փռուած անփոյթ լուսնի տակ,
Կը ձայնակցի իմ կիթառիս,
Հնչուն ձայնով մը յստակ:
Անուշ հովիկ, փչէ՛ յուշիկ
Ու դէպ ինձ բեր ձայնն անուշիկ:
Ձայնով կ՚երգէ սէր ու զրգուանք,
Համակ յուզում ու սառսուռ.
Ալ թող աղջիկ, երգդ ու նուագ.
Բոց աչքերդ ինձ դարձուր:
Անուշ հովիկ, փչէ՛ յուշիկ
Ու դէպ ինձ բեր նաւն ու աղջիկ:

## 5. ԱՐՇԱԼՈՅՍԸ ՆՈՐԷՆ ԲԱՑՒԱՒ

Արշալոյսը նորէն բացուաւ,
Ամպու զամպեն ձօն կուգայ.
Ալ ձին եկաւ անտէր եկաւ,
Ա՜խ իմ եարը տուն չեկաւ:
Լոյսը բացուաւ, դուռը բացուաւ,
Ալ ձին քրտնած ներս ինկաւ,
Սիրուն կրծքին վէրք ստացած,
Արինթաթախ, ներս ինկաւ:

Ա՛խ սիրուն ձի, դու ինձ ասա՛ ,
Ո՞ւր տեղ քաղիր իմ եարը,
Ո՞ր ձորի մէջ, ո՛ր քարի տակ ,
Անտէր թողիր իմ եարը :
Ամպեր եկան, մութը պատեց .
Մինակ նստած կուլամ ես ,
Սիրելիիս , կորած եարիս ,
Սուգ ու շիվան կ'անեմ ես :

## 6. ԻՄ ՉԻՆԱՐԻ ԵԱՐԸ

Արեւ թըռնելով եկաւ , իմ չինարի եարը .
Մեր բանը կըռուով եկաւ , դարդիման եարը -
Թշնամու որդին մեռնի , դարդիման եարը ,
Իրա չար սըրտով եկաւ , դարդիման եարը :
Իմ չինարի եարը , իմ չինարի եարը ,
» » » զովական եարը :
Ճրագը վառայ , վառայ ,
Հօր հետ վատամարդ դառնայ ,
Մօր ու աղբեր թող տուի ,
Ես իմ սիրածին առայ :
Քարափի ծերեն կանչի .
Թող թշնամին ամաչի ,
Արեւիդ մեռնեմ, եար ջան ,
Չինարի պէս կանանչի :

## 7. ԱՌՏՈՒ ԿԱՆՈՒԽ ԴՈՒ ԺՈՒՌ Կ'ԳԱՍ

Առտուն կ'ելլես դու ժուռ կուգաս ,
Թափած մազով , վա՛յ , վա՛յ ,
Բարեւ կուտաս , բարեւ կ'առնես ,
Հազար նազով վա՛յ , վա՛յ :
Սիրուն աղջիկ , աղուոր ,
Քեզ կը սիրեմ իրաւոր ,
Սիրտս սիրովդ վիրաւոր ,
Աղուոր, սիրուն աղջիկ , մի՛ հեռանար :

Զրկողին քէն է սիրտը ,
Մուք կը գոցէ, վա՜յ , վա՜յ ,
Քու նայուածքիդ ինկած տեղը ,
Հուր է , բոց է , վա՜յ, վայ :
Սիրտս սիրովդ տոչոր ,
Կը մեռնիմ կոր խաչոր ,
Քեզ կը սիրեմ իրաւոր
Աղուոր , սիրուն աղջիկ , մի՛ հեռանար :

## Ը. ԱԼԱԳԵԱԶ ՍԱՐՆ ԱՄՊԵԼ Ա

Ալագեազ սարն ամպել ա ,
Վայ , լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜,
Աղբեր իր ձին թամբել ա ,
Իմ մայրիկ ջան , իմ մայրիկ ջան ,
Աղբեր իր ձին թամբել ա .
Եարոջ դըռնէն անցել ա .
» » » ».
Ելէ դաշտը խաղցել ա .
» » » ».
Անձրեւ եկէ թըրջել ա .
» » » ».
Արեւ զարնէ չորցել ա .
» » » ».
Քան կարմիր վարդ բացուել ա :

## Թ. ՀՈՎՈՒԻՆ ԵՐԳԸ

Ամէն առտու ոչխարներս կ'առնէի ,
Դէպի դաշտը տանէի ,
Սիրտս ուրախ , ձեռքս սրինգս առած ,
Մեղմիւ , մեղմիւ կ'երգէի :
Էմէյի , էմէյի կը մայէի ,
Աղուորիկ աղուորիկ կ'ուտէին,
Երբ սրինգս զարնէի ,
Շուտ մը քովիկս կուգային :

Պայծառ օր մ'էր երբ այսպէս կ'արածէին ,
Երգի մը ձայն լսեցի ,
Որ անուշիկ , շատ անուշիկ կը լսուէր .
Իսկոյն դէպի հոն վազեցի :
Մազերը սփռած , հիւս տարածած ,
Գեղջկուհի մը կ'երգէր .
Թշուառական երբ զիս տեսաւ ,
Կամաց կամաց հեռացաւ :
Դարձայ եկայ որ ոչխարներս առնեմ ,
Եղուկ մ'եմ, ա՛լ չի գտի ,
Բերանս հովին , բայց աչքերով մնացի ,
Մտածեցի թէ ի՞նչ անեմ , ի՞նչ անեմ :
Զարանքնի գեղջկուհւոյն ձայն ,
Ոչխարներս կորոյս համայն ,
Խեղճ ու կրակ մնացի ,
Խրճիթ դարձայ ձեռնունայն :
Հա՛ պարապ եղայ , հա՛ պարապ եղայ ,
» » » » եղայ եղայ եղայ ,
» » » հա պարապ եղայ ,
» » » եղայ եղայ եղայ ,

## 10. ԲՈՅԴ ԲԱՐՁՐ

Բոյդ բարձր սալվի չինար,
Աչքդ նաշխուն ունքդ կամար,
Դու ստեղծուած ես ինձ համար,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:
Գոյնդ նըման է մարմարի,
Հագիք շորերն է յարմարի,
Դու ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:
Քեզ չի տեսնել՝ ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ քեզ տամ պահէ,

Ինձնում եղած ինձ ի՞նչ շահ է,
Անգին՛ ծաղիկ իմ նոր բուսած:
Գիշեր ցերեկ նստած լալով,
Աղի արցունք թափելով,
Ինձ թողել ես տանջուելով.
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:
Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
Աղաչեցի ես իմ փրկչին,
Որ չկտրէ յոյսն իմ վերջին,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած·

## ԺԱ. ԳՆԱ, ԳՆԱ, ՀԵՏԻԴ ԵՄ

Գնա՛, գնա՛, հետիդ եմ,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սարինօ, եար ջան,
Ծարինօ, եար ջան,
Կարմիր խնձոր զօտիդ եմ,
Հա եարինօ եար ջան,
Սարինօ, եար ջան:
Դու ինձ էստեղ չես թողնի հա՛, հա՛, եւն.
Որտեղ երթաս, մօտիդ եմ, հա՛:
Ապարանը քարոտ ա,
Քարի տակն արօտ ա,
Ուղիղ եօթը տարի ա,
Քոյրն եղբօրն կարօտ ա
Եար եմ զտել նառի պէս,
Ընկուզենի ծառի պէս,
Ուր որ երթայ ձայնել եմ,
Էն մեր սիրուն սարի պէս·

## 12. ԳԻՇԵՐ ՑԵՐԵԿ ԿԸ ՀԱՌԱՉԵՄ

Գիշեր ցերեկ կը հառաչեմ, ա՛խ օրիորդ քո՛ւ սիրոյդ,
Սեւ աչքերուդ, վարդ այտերուդ զարնուեցայ, ի՛նչ օգուտ,
Աչքերուդ, այտերուդ, եւ ոսկեթել մազերուդ,
Միայն քեզի սա կ՚աղաչեմ որ ունենաս քիչ մը գութ:

Գիտես անգութ, որ իմ սրտիկս չի դիմանար այս ցաւուն,
Քեզի համար ա՛լ չի դադրիր աչքի արցունքն օրն ի բուն,
Քեզի միայն կը յիշեմ, թէ քուն ըլլամ, թէ արթուն,
Թէ մութ ըլլայ, միտքս կուգաս, նոյնպէս եւ առաւօտուն:

Ցաւ աղուորներ թէեւ տեսայ, սիրտս միայն քեզ սիրեց,
Ո՛հ, չեմ գիտեր, ըսէ ինծի թէ քու սրտիդ ո՞վ տիրեց,
Ա՛խ, քո խաբուն բարի մայրիկդ իրեն փեսայ ո՞վ ընտրեց,
Գերի ըլլամ քո մօրկանդ, եթէ զիս գուրկ չձգեց:

Ուրախ էի, գիտես, օր մը ես քեզի նստեցուցի,
Սա ներսիդիս ինչ կայ չիկայ ամէնն ալ հասկցուցի,
Անուշ բոյրդ զիս թովեց, քենէ վարդ մը փրցուցի,
Այն ի՛նչ օր էր, ի՛նչ ժամ, խելքս գլխէս թռցուցի:

## 13. ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ

Դարդս լացէք, սարի սմբուլ,
Ալվան ալվան ծաղիկներ:
Դարդս լացէք, բաղի բլբուլ,
Ամպշող երկնից զով հովեր:

Երկինք-գետինք գլխուս մթնան,
Անտուն անտէր կուլամ ես,
Եարիս սարան, ջանիս սարան,
Հոնգուր, հոնգուր կուլամ ես:

Ա՜խ. եարըս ինծ հանեց սըրտէն,
Անհար թողեց ու գընաց...
Սըրտիս սուգէն — խորունկ եարին,
Անտեղ թողեց ու գընաց...:

Դարդս լացէ՛ք, սարի սըմբուլ,
Այլան, ալլան ծաղիկներ,
Դարդս լացէ՛ք, բաղի բըլբուլ,
Ամպշող երկնից զով հովեր...:

## 14. ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն,
Իմ ծերացած մօր մօտէն,
Փայլեց էրշոյլ ուրախութեան,
Բայց ափսո՜ս որ երազ էր:
Կարկաչահոս աղբիւրն այնտեղ,
Թաւալում էր մարգարիտ,
Նա յստակ էր, որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ:
Եւ մեղեդին տխուր մայրենի,
Յիշեց մանկութեան օրեր,
Մօրս համբոյր ես ըզգացի,
Ա՜խ, ափսո՜ս, որ երազ էր:
Կրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերը սրբեց — շատ թաց էր,
Բայց արտասուք զընում էին,
Ա՜խ, այն ինչո՞ւ երազ էր:

## 15. ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅԻ

Ես սարէն կուգայի,
Դուն դուռը բացիր,
Ձեռքդ ծոցը տարիր,
Ա՜խ ըրիր լացիր:
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վառուում եմ,
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, հալուում եմ,
Հալուում եմ, վառուում եմ:
Ես մի պինդ պաղ էի,
Դու մռմուռ լացիր,
Քո հրեղէն արցունքով,
Ինծի հալեցիր:

Ես մի չոր ծառ էի ,
Դու զարնան արեւ ,
Քո սիրով ծաղկեցայ ,
Իմ ճիւղն ու տերեւ ։
Թէ ինձ չէիր առնի ,
Ինչո՞ւ սիրեցիր ,
Մի բուռ կրակ եղար ,
Սիրտըս երեցիր:

## 16. ԱՌԱՋԻՆ ՍԷՐ

Երէկ տեսայ քեզ պարտիզում ,
Ծաղկած էիր վարդի պէս ,
Եւ քո պատկերդ հոգւոյս խորքում ,
Նկարուեցաւ յուսատես:
Այնտեղ, ո՛վ կոյս , ինձ գերեցիր ,
Այնտեղ ես քեզ սիրեցի ,
Այնտեղ հոգիս ջերմ սիրայիր
Ես քեզ ընծայ բերեցի ։
Այժմ չունիմ մի ուրախ ժամ ,
Տըխուր է սիրտս իբր դագաղ ,
Ես մեռանել մինչեւ անգամ ,
Յանկանում եմ ո՛հ աւա՜ղ:

## 17. ԵԱՐ ՄԸ ՈՒՆԷԻ

Եար մ'ունէի չինար պօյով , տեսքով աննման ,
Սիրուններուն թագուհին էր սիրոյ , անսահման ,
Ա՛խ , իմ անուշ եար , ինչո՞ւ հեռացար ,
Ինչո՞ւ զիս թողիր , ինչո՞ւ մոռացար:
Երբ հեռացար դուն ինձանից, հոգիս խաւարեց ,
Կանաչազարդ պարտիզումս վարդը թառամեց:
Ա՛խ , իմ անուշ եար , ինչո՞ւ հեռացար ,
Ինչո՞ւ զիս թողիր , ինչո՞ւ մոռացար:
Պատէն կախուած իմ ջութակը ինկաւ փշրուեց .
Կանաչազարդ պարտիզումս վարդը թառամեց ,
Ա՛խ , իմ անուշ եար... եւն.,

## 18. ԼՃԻ ՄԷՋ ՆԱՒԱԿԸ

Լճի մէջ նաւակը,
Մեղմ հողմիկ կը տանի,
Նորա մէջ նստած է,
Սիրահար պատանի:

Պատանին ձեռքն ունի.
Կիթառ ու կ'երգէ,
Իսկ քամին կը փախցու.
Նաւակը եզերքէն:

Լճի մէջ կայ,
Քարաշէն մի ամրոց,
Սիրուհւոյ բնակարան
Հանապազ փակ ու գոց:

Պատանւոյ նաւակը,
Դէպ ամրոց կը վազէր,
Ուր նորա անցեալին,
Արտասրով կ'սպասէր:

Մեղմ հովը աւելի,
Աւելի սաստկացաւ,
Երկինքը բուխպ պատեց,
Փոթորիկ բարձրացաւ:

Ալիքի լեռները
Գոռալով կը ծփան,
Պատանին աներկիւղ,
Կը նուազէ կիթառան:

Լուսնակը ամպերի,
Տակերէն երեւցաւ,
Սոսկալի աղէտի
Պատկերը բացուեցաւ:

Կէս ճամբան ալիքը,
Նաւակին խփուեցան,
Նաւակը փշրեցին,
Յոյս չկայ փրկութեան:

Պատանին աչքերը,
Լուսնակին բարձրացուց,
Կիթառի լարերը
Նա ուժգին հնչեցուց:

Տար վերջին խօսքերս,
Անձկալւոյս ո՛վ լուսին,
Թէ քաղցրիկ անունդ,
Յիշելով կը մեռնիմ:

Դադրեցան փոթորիկ
Ու ալիք պառկեցան,
Ջրի վրայ կոտրտանք
Նաւակը երեւցաւ:

Սիրուհին արտասրով,
Նայեցաւ լճակին,
Հասկցաւ դառնութիւն,
Իր անբախտ վիճակին:
Իրարմէ բաժնեցին
Մեզ աշխար եւ այս կեանք
Գէթ մահով այսուհետեւ,
Ջրի տակ միանանք:

Ասաց եւ աղաղակ
Բարձրացուց նա ուժգին,
Գլորուեց զոհ եղաւ,
Անկէտում ծովակին:

## 19. ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐ

Լուսնակ գիշեր բոլորովին քուն չունիմ,
Ինձ տեսնողը կարծում է տուն չունիմ,
Ննջարանս սենեակիդ պատի տակն է,
Կեանք, խնդութիւն պարզ գիշերուայ լուսնակն է։
Մի՛ լար, մի՛ լար, մեռնիմ կամար ունքերուդ,
Արտասուքը վնաս կուտայ աչերուդ։
Արի գնանք խորհուրդ անենք միասին,
Ամուսնանանք, ա՛լ չըսպասենք մեծ պասին։

## 20. ԼԷՓՕ, ԼԷ՛, ԼԷ՛

Լէփօ, լէ, լէ, լէփօ լէ, լէ, լէփօ, լէ, լէ, հօտայի,
Հողալլու ջան, հողալլու ջան, հողալլու,
Հողալլու ջան, հողալլու ջան, հողալլէ,
Գիւզէլ, շիրին, եարալլը ջան, եարալլէ,
Գիւզէլ, շիրին, եարալլը ջան, եարալլէ։
Հօլէ՛յ, հօլէ՛յ, հօլէյլէ,
Հայրս տունը թող նզնի,
Մայրս տունը թող չէղնի,
Դէ տղերք էկէք, թող հանենք,
Ձար թշնամու աչքը տանենք։

## 21. ԻՄ ԸՆՏՐԱԾԸ

Կապոյտ երկնքում,
Աստղ՚եր են փայլում,
Այլ եւ լուսնակը,
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն,
Է արեգակը։
Կանաչ դաշտերում,
Եւ այգիներում

Ծաղիկներ կան շատ,
Բայց չէ ոչ մինը,
Վարդի նմանը,
Նա է բնութեան զարդ:
Սիրուն աղջիկներ,
Ինչպէս ծաղիկներ,
Ամէն տեղ շատ կան,
Բայց իմ ընտրածը
Հրեշտակի է նըման:

## 22. ԿՈՒԺՆ ԱՌԱՅ

Կուժն առայ, եկայ սարը,
Չը գըտայ Ֆիտան եարը,
Ֆիտան եարը ինձ տըւէք,
Չը քաշեմ ահ ու զարը:
Ծեծ սարի հովին մեռնեմ,
Շէկ տըղի բոյին մեռնեմ,
Մի տարի ա չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնեմ:
Բըլբուլ սարի վերայ,
Խընձորը ծառի վերայ,
Սիրած սիրածի տային,
Չոր գետնին՝ քարի վերայ:

## 23. ՀՈԳԻՈՅՍ ՀԱՏՈՐԸ

Հոգւոյս հատոր իմ հրեշտակըս, ո՞ւր մնացիր,
Բաժինս եղաւ միայն տանջանք, ողբ ու լաց,
Ոչ ոք եղաւ հէք վիճակիս խորհիմաց,
Կարօտովը պիտի մեռնիմ, աչքըս բաց:
Ե՞րբ պիտի գայ նազալիս զիս բափոփէ,
Անջատման սուրն հոգւոյս տունը կը կոփէ,
Մահուան բօբը հեզ որտիկս կը տրոփէ,
Կարօտովը պիտի մեռնիմ, աչքըս բաց:

## 24. ՀՈՎ ԼԻՆԻ

Հով, հով, հով լինի,
Սարիս տունը ծով լինի,
Թող, թող, թող լինի,
Սարըս քամարով լինի:
Դէ գանէք գանէք, հողը հանէք,
Մեր թշնամու դողը հանէք:
Ծաղիկ ես ծաղկանց միջին,
Մի հատ ես աղջկանց միջին,
Եա՛ր, ինձ պարզերես արա,
Իմ ընկեր մարդկանց միջին:
Արի մի թաղպար խաղանք,
Տընկող մնանք, չը կաղանք,
Հարսնիքիդ ալիւրը,
Մուղնու ուխտից վաղ աղանք:
Իրար հետ բաղը գնանք,
Ուտենք խմենք, լիանանք,
Թշնամու աչքը հանենք,
Մեր Աստուծոյ գոհանանք:

## 25 ՀՈՎԻՒԸ ՍԱՐԻՆ ՏԽ.ԵՑ

Հովիւը սարին տխրեց,
Սիրոյ երգը նուագեց,
Երգը վառ աչերին, երգը վարդ այտերին,
Երգը զուարթ օրերին:
Ա՛հ, խեղճ հովիւ, քեզ բաժին
Խոր ձորին մնացիր, երգը վառ... եւն:
Ահա կուգայ նոր գարուն,
Ծաղիկներով զարդարուն,
Սիրում եմ գոյնզգոյն ծաղիկներ,
Հա՛, հա՛, հա՛, գոյնզգոյն ծաղիկներ:
Հէ՛, խեղճ հովիւ... եւայլն:

## 26- ՀԱՄԵՍՏ ԱՂՋԻԿ

Համեստ աղջիկ, ինձ մի՛ տանջիր չարաչար,
Չարաչար սիրուն ջան, չարաչար,
Հոգիս հոգւոյդ մատաղ լինի ամեն ժամ,
Ամեն ժամ, սիրուն ջան ամեն ժամ,
Ես հայ դու հայ մեր մէջ չկայ խտրութիւն,
Խտրութիւն, սիրուն ջան, խտրութիւն,
Նազլու, նազլու, ինձ մի քցիր սարէ սար.
Սարէ սար, սիրուն ջան, սարէ սար,
Մատաղ կեանքումս ինձ մի դներ գերեզման.
Գերեզման, սիրուն ջան, գերեզման:

## 27- ՀՈՅ ՆԱՐ

Հոյ նար, ծամեր ունիս ծիրանի,
Ջան նար, հովը թել թել կը տանի,
Հապօն գոնդա, ես չեմ գոնդա,
Դու գոնդա, գոնդա, գոնդա:
Հոյ նար, աչեր ունիս գեղանի,
Ջան նար, անոնք ինծի կը ժպտին,
Հապօն գոնդա... եւայլն.
Հոյ նար, շրթեր ունիս նռնենի,
Ջան նար, քամին հետը կը տանի,
Հապօն գոնդա... եւայլն:

## 28- ՀՈՅ ՆԱԶԱՆ ԻՄ

Հոյ նազան իմ, նազան իմ.
Ջան նազան իմ, նազան իմ,
Նազան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Ծաղիկ քաղելով եկար:
Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հոյ նազան իմ, նազան իմ,
Ինծ համար աղաւնիկ ես,

Ջան նազան իմ, նազան իմ,
Գըլխիս վրով պըշիտ տուր.
Հոյ նազան իմ, նազան իմ:
Նաշխուն թեւ թիթեռնիկ ես,
Ջան նազան իմ, նազան իմ,
Սար ջան դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Շաքար ծամելով եկար,
Քիչ քիչ ուտելով եկա.:

## 29. ՀԱԲՐԲԱՆ

Հաբրբան, ջան է ջան
Համբարձմանին այն գիշեր,
Այն գիշեր, լուսնակ գիշեր,
Պառկիմ ծոցդ մէկ գիշեր.
Ծըծեմ քո կարմիր թուշեր:
Հաբրբան, ջան է ջան,
Սիրել եմ սէրն երեսին.
Անթառամ թերն երեսին,
Ո՛վ իմ սիրածն ինձ չի տայ,
Աստըծոյ կրակն երեսին:
Հաբրբան, ջան է ջան,
Սարի թրթընջուկ թազա,
Մեղր ու շաքար քեզ մազա,
Ինչպէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տըղին ո՞նց սազայ:
Ձեր տան տակէն վար կ’անեմ,
Ձար քրղերին քար կ’անեմ,
Թող իմ սիրածն ինծի տան,
Տըրտմութիւնս բարկ անեմ:
Աշուղի պէս խաղ սասա,
Բլբուլի պէս տաղ ասա,
Ինչքան որ գովես, արժեմ,
Իմ մօր գովական փեսայ:

## 30. ԽՆԿԻ ԾԱՌ

Մեր դրանը խընկի ծառ,
Գիւլիւմ ջան,
Ձեր դրանը խընկի ծառ,
Գիւլիւմ ջան,
Խընկենին այ, բերել բար,
Գիւլիւմ ջան.
Իմ խօրօտիկ, պզտիկ եար,
Գիւլիւմ ջան
Մեր դրանը խընկի ծառ,
Նախշուն բլբուլ վըրէն թառ,
Երթար ու գար, շօրօր տար,
Սիրուն եարին օրօր տար։
Մեր դրանը խընկի ծառ,
Մարջան բլբուլ վըրէն թառ,
Գընար ու գար թեւին տար,
Անուշ եարի շընին տար:
Մեր դրանը խընկի ծառ,
Ոսկի բլբուլ վըրէն թառ,
Կարմիր խնձոր անել տար.
Ալւան ծաղիկ տանել տար:

## 31. ՄԱՏԱՂ ԸԼԼԱՄ ԱՂՋԻԿ

Մատաղ ըլլամ, մատաղ աղջիկ, քուկի, մատղաշ հասակիդ,
Քընքուշ դէմքիդ, սեւուկ աչքիդ, զոյգ մը սեւուկ պիսակիդ,
Արդէն խոցեց, փափուկ սիրտըս թարթիչներդ նետի պէս,
Սեւ յօնքերըդ մի՛ պըռըստեր ի սէր զանգուր գիսակիդ,
Առանց քեզի ես վայրկեան մը կանքիս մէջ չեմ հեշտանար.
Լոյս երեսդ ի՞նչ անուշ է. դիտելով չեմ կըշտանար,
Թէ շլացեալ աչքիս արցունք թափին, դու մի վըշտանար,
Կ'արժէ որ ես զոհ ըլլամ քեզ, գերազանցն ես տեսակիդ:

Դու ես կեանքս, անձս, հոգիս. երկու աչքիս լոյս,
Դու ես գանձս, երջանկութիւն սիրահարիս միակ յոյսն,
Նազանքներըդ անթիւ հաճոյք կը պատճառեն թշուառիս
Ուզածիդ չափ զիս չարչարէ, պէտք չէ երբէք պատկառիս
Բայց դուն ինչո՞ւ, ազնիւ սոխակ, ասդիս անդին կը [թառիս,
Դանդաղ դանդաղ կը մօտենաս պատրաստ նպատակիդ։

## 32. ՇՈՐՈՐԱ ԱՆՈՒՇ ՋԱՆ

Շորորա, անուշ ջան, շորորա՛,
Անուշի շորորով ես կորայ.
Անուշ լուսնակ նորել է.
Շորորա. անուշ ջան շորորա։
Նորել բակ բոլորել է,
Անուշի շորորով ես կորայ,
Շարան—շարան ամպի մէջ.
Շորորա անուշ ջան. շորորա։
Մրտել ու մոլորել է.
Անուշի շորորով ես կորայ
Վարդ եմ քաղել շաղերով
Վեր եմ դրել մազերով
Մի ջուխտ շամամ եմ կորցրել,
Իրա կանաչ բաղերով :

## 33. ՈՐՍԿԱՆ ԱՂԲԵՐ

Որսկան աղբեր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փնտռես,
Ասա՛ երաբ, դուն չի տեսար
Իմ մարալըս, իմ բալէս ...։
Դարդի ձեռքէն սարերն ընկայ,
Իմ արեւըս իմ բալէս.
Գլուխն առած քարերն ընկայ,
Իմ ծաղիկս իմ բալէս։
Տեսայ, քուրիկ նաշխուն բալէդ,
Կարմիր կանաչ է կապել։

Սիրած եարի համբոյրի տեղ ,
Սըրտին վարդեր են ծըլել :
Ոսկեան աղբեր , սառն , եարաբ ,
Ո՞վ է հարսը իմ բալիս ,
Ո՞վ է զըրկում չոր գըլուխը ,
Իմ մարալիս , իմ լալիս . . . ։
Տեսայ , քուրիկ , դարդոտ բալեդ ,
Ցարն է դըրել բարձի տեղ ,
Անուշ քընով տաք զընդակն է
Կըրծքում գրկել եարի տեղ :

## 34. ՈՒՐՏԵՂ ՍԻՐՈՒՆ ԿԻՆ ԿԸ ՏԵՍՆԵՄ

Ուրտեղ սիրուն կին կը տեսնեմ .
Կը նորանան դարդերըս .
Ու երբ անուշ երգ մը լսեմ ,
Կը խորանան դարդերըս .
Սահման չունին , դարման չունին ,
Չեն վերջանում չեն անցնում
Ա՜խ , մահուան պէս , սեւ մահուան պէս ,
Իմ դարդերս դարդերըս ։
Ջուր յոյսերով . անմահ սիրով .
Ես քեզ խորունկ սիրեցի ,
Աստղ ու երկինք-մոտաղ սիրտըս
Ոտքերիդ տակ փըռեցի ։
Սէր չը տուի ու աշխարհեն
Սիրտըս կըտրաւ , շուշան ջան :
Ա՜խ , զըմռուխտ է ա՜խ զմռուխտ է ,
Իմ յոյսերս , իմ սէրս ։
Կարօտ կեցայ կընոջ սիրուն ,
Սրտի ոսկի արեւին .
Պապակ կեցայ մութ սարերին ,
Բաշը փըրփուր նըժոյգին ,
Կեանքըս անցաւ թեւերը թափ ,
Սիրտը կոտրած սազի պէս ,
Ա՜խ , ծովեն խոր , սարեն ծանըր
Իմ դարդե՜րըս , դարդե՜րըս . . . ։

## 35. ՉԵՍ ՀԱՒԱՏՈՒՄ

Չես հաւատում որ քեզ եմ սիրում,
Թէ գիշեր ցերեկ անքուն անհանգիստ.
Միայն քեզ համար մտածում եմ միշտ,
Դու չես հաւատում որ քեզ եմ սիրում։
Թէ քու վառ սիրով ես հիւանդ պառկայ,
Ուժս սպառած, լեզուս չորացած.
Ասեմ քո սիրուն հոգիս կ'աւանդեմ,
Դու չես հաւատում որ քեզ կը սիրեմ։
Բայց եթէ յանկարծ ես խելագարուեմ,
Ձեռներս ծոցս փողոցները շրջիմ,
Եւ սիրոյ երգը երգեմ սգալով,
Դու չես հաւատում . . . եւայլն։
Վերջապէս թէ քո սիրտը յաղթելով,
Սպաննէ յանկարծ վերջին շունչս տալով,
Քեզ համար միայն արիւնս թափեմ,
Դու չես հաւատում . . . եւայլն։
Թէ սառ դիակս ամփոփուած լինի,
Մի քանի չոր չոր տախտակների մէջ,
Ընկերներս տանին դագաղս գրկած,
Դու չես հաւատում . . . եւայլն։
Ամէնք դառն արցունք թափելով պիտի
Ինծի համբուրեն, հրաժեշտ տալով,
Դու չես մօտենար գէթ վերջին անգամ,
Բարեւդ տալու մինչեւ յաւիտեան։
Ծնողք, բարեկամ, երկինք ու երկիր,
Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում։
Դու չես հաւատում . . . եւայլն։
Երբ արեւ լուսին խաւարին յանկարծ,
Երբ ինձ իջեցնեն խաւար գերեզման,
Գերեզմանիցս էլ մի ճիչ կ'արձակեմ,
սիրում, էլ չես հաւատար։

## 36. ՊԱՂ ԱՂԲԻՒՐԻՆ ՄՕՏ

Պաղ աղբիւրի մօտը կանգնած մի աղջիկ,
Սափոր ձեռին, ինքն էր գեղեցիկ,
Առաւօտուն բոնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար,
Նըման ես կարմիր խընձոր լորիկ,
Լորիկ, լորիկ, ջանըմ լորիկ:
Պաղ աղբիւրի մօտ,
Կանգնած հայ տըղայ,
Հրացանը ուսին,
Ինքն էր քաջ հսկայ:
Առաւօտուն բոնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար.
Նըման ես կարմիր խնձոր լորիկ,
Լորիկ, լորիկ, ջանըմ լորիկ:

## 37. ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅ ՁԻԱՒՈՐ

Սարէն կուգայ ձիաւոր,
Վայլէ, լէ, լէ, լէ,
Մեր տանը չարտախաւոր:
Ինճիլիկ փընճիլիկ, կարճլիկ, եար, եար,
» » » » »
Հրէս եկաւ իմ աղբեր,
Երեք օրուան թագաւոր,
Ծառերի հովին ղուրպան,
Իմ եարի պոյի ղուրպան,
Երկու օր ա չեմ տեսել,
Տեսնողի աչքին ղուրպան:
Անձրեւ եկաւ ցողայէն,
Ուռի տերեւ դողայէն,
Հրէս եկաւ իմ աղբեր,
Ալ ձին տակէն խաղայէն:

Ճամբայ տունէ, առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ,
Ուխտ եմ արել որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ:

## 38. ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ

Սարերի հովին մեռնիմ,
Իմ եարին բոյին մեռնիմ.
Էսօր օխտն օր չեմ տեսել,
Տեսնողին աչքին մեռնիմ:
Ա՛խ էնեմ, արուն կուգայ,
Սեւ սրտիս զարուն կուգայ,
Ի՞նչ էնեմ ես էն եարը,
Գըտբտուի, զարուն կուգայ:
Եար, եար, եար, եար, նա նայ,
Ա՛խ նանի ջան, նանի,
Վա՜ նանի, նանի ջան:
Լուսնակը կեռ ու կամար,
Քոյր մեռնի եղբօր համար,
Օխտն օր պաս էր պահել,
Իմ եարի ճամբի համար.
Ա՛խ էնիմ արիւն . . . եւայլն:

## 39. ՍԻՐԵՑԻ ԵԱՐՍ

Սիրեցի եարըս տարան,
Եարայ տուին ու տարան,
Էս ի՛նչ զուլում աշխարհ է,
Գոկեցին սիրտս ու տարան:
Ցաւս մեծ է, ճար չը կայ,
Ճար կայ, ա՛խ ճարակ չը կայ.
Էս ի՛նչ զուլում աշխարհ է,
Սրտակից ընկեր չը կայ:

Լաւ օրերս անցան գընացին ,
Սեւ դարդերս մնացին ,
Ես ի՜նչ զուլում աշխարհ է ,
Խոր ցաւերս մնացին :
Սարերի վրով գնաց ,
Իմ եարս խռով գնաց ,
Ոչ լոր էր նա, ոչ կաքաւ ,
Ձեռիցս թռաւ գնաց :

## 40, ՍԷՐ

Սէր իմ, ո՜վ սէր, սէր :
Ա՜խ, դու անզգութ սէր՝
Տարիր խելք միտքս ,
Գլխիս եղար տէր :
Ո՜վ իմ սիրոյ կոյս ,
Հատոր իմ հոգւոյս ,
Առանց քեզ մի ժամ ,
Կեանքից չունիմ յոյս :
Մարդիկ անհամար ,
Ինձ խենթ խելագար
Կոչում են աժմուս ,
Դու եղար պատճառ :
Մինչ ե՞րբ դու այսպէս,
Ինձ պիտի տանջես,
Մինչ ե՞րբ դու նրազ,
Այրւող թիթեռն ես:

## 41. ՍԻՐՈՒՀԻՍ

Սիրուհիս քեզ համար,
Կեանքս կես եղաւ,
Քո անունն էր միայն,
Որ ինձ կեանք տըւաւ:

Աղջիկ քո սիրուն,
Շքեղ անունով.
Սեւորակ աչքով,
Երկնածիր ունքով:
Այրուի քո սիրտը,
Այրեցիր հըրով,
Վառուի քո սիրտը,
Վառեցիր սիրով:
Մանուշակ նունուֆար,
Վարդ, մեխակ շուշան,
Ոչինչ են ինձ համար,
Իմ անգին հոգեակ:
Մօրիցդ գաղտուկ,
Արի մեր պարտէզ,
Ման գանք միասին
Սիրուն դու եւ ես.
Այրուի՛ քո սիրտը . . . եւլն. . . .
Բայց ափսո՛ս չեմ կարող ,
Որ գամ քեզ տեսնել,
Իմ վիրաւոր սրտիս
Կարօտը առնեմ:
Դէ՛, բաւական է,
Նայիր երկնքին,
Կապոյտ երկնքին ,
Քո խղճմտանքին:
Այրուի՛ քո սիրտը . . . եւլն. . . . :

## 42. ՍՕՆԱ ԵԱՐ

Սօնա եար, Սօնա եար,
Սօնա սիրուն, Սօնա եար,
Վառդավառը գալիս ա ,
Սօնա եար , Սօնա եար ,
Ծաղիկը ցնծալիս ա ,

Սօնա սիրուն, Սօնա եար,
Ա՛յ գիւլին կանչող աղջիկ,
Սօնա եար, Սօնա եար,
Ձենդ ճյուրլտայիս ա,
Սօնա սիրուն, Սօնա եար,
Սօնա եար, Սօնա եար,
Սօնա սիրուն, Սօնա եար:

## 43, ՍԱՐԷՆ ԵԼԱՒ

Սարէն ելաւ երկու մուխ.
Բոյիդ մեռնիմ,
Մինչ հանք ա, մի կը ծուխ,
Սոյիդ մեռնիմ,
Բոյիդ մեռնիմ,
Երկու սիրուն երեւաց,
Մինը չէկ ու մինը քուխ,
Սոյիդ մեռնիմ:
Կապոյտ քուռակն ասելու,
Ոսկի սարը ճարելու,
Դէմի կանաչ սարի լանջ,
Արեւի պէս վառել ա,
Իմ եարն ա շատ խորոտիկ,
Մէջքին ա ոսկի գօտիկ,
Աստուած սիրէք, աղբրտիք,
Ն          րէք եարիս մօտ:

## ԱՐԸ ՍԱՐԻ ՂՄԱՆ ՉԷ

Սարը սարի նման չէ,
Հո՛յ, օրօր Ափնօ,
Լաւն ասէք. յաւն ասէք՝ իմ եարի.
Իմ սիրելու վասը մ'ասէք իմ եարի:
Եարը եարի նման չէ,
Հարսն ու աղջիկ շատ տեսայ,
Մէկն էլ եարի նման չէ:

Զառ մանուշակ բաղի մէջ,
Թագնուել է բաղի մէջ,
Լուսաբացին ծաղկում ա,
Հովի, շողի, շաղի մէջ,
Երանի՜ քեզ, ա՛լ աղջիկ,
Ոսկիդ ծալէ, ծալ աղջիկ,
Դու մեր տանը հարսնցու,
Ես քեզ համար տալ աղջիկ:

## 45. ՍԱՐԵՐԸ ՀՈՎԵԼԱ

Սարերը հովել ա Տիրանի ջան, հօ՜ հովել հօ՜,
Բաներուս մընացել ա Տիրանի ջան հօ՜ հովել հօ՜,
Օրերը գնացել ա » » » » »
Էլ գնալով անելով » » » » »

## 46 ՓԵՓԵԽՍՈԼԻՆ ՍԻՐԱՀԱՐԸ

Փայլուն աչքով, փոքր ոտքով,
Կարմրուկ աղջիկ մը երբ տեսնեմ,
Չեմ դիմանար. մեծ փութով
Սիրտս անոր կը յանձնեմ.
Քաշուիլն ի՛նչ է. չեմ գիտեր,
Պատիւն ի՛նչ է, չեմ սեպեր,
Թէեւ ելլէ զիս չափէ,
Կ՚ուզեմ զայն իսկոյն գրկել:
Խնճոյք, հարսնիք, անուան տօն,
Պարահանդէս կամ թատրոն,
Հրաւէրի չեմ նայիր:
Ներս կը նետուիմ սանձասօն:
Քաշուիլն ի՛նչ է, չեմ գիտեր,
Գավալիէան ալ չեմ սեպեր,
Թէեւ հրէ ու մշտէ,
Կ՚ուզեմ ձեռքը ողմրտել:

Գիշերներն քուն չունիմ,
Փողոցներն կը շրջիմ,
Կը քսվռտիմ աղջըկանց,
Խօսք կը նետեմ հեռուանց:
    Քաշուիլն ի՛նչ է, չեմ գիտեր,
    Պատիւն ի՛նչ է չեմ սեպեր,
    Թէեւ կիցով դուրս նետեն,
    Կ'ուզեմ զանոնք կամռտել:
Ամէն աղջկանց ծանօթ եմ,
Ճաքար ու փունջեր դրկած եմ,
Ամենուն ալ նամակով,
Կեանքս զոհել ուխտած եմ:
    Քաշուիլն ի՛նչ է, չեմ գիտեր,
    Խիպ ու ամօթ չեմ սեպեր,
    Թէեւ երեսիս թքնեն,
    Կ'ուզեմ զանոնք համբուրել:
Դեռ անցեալ օր նոր հարս մը,
Որ էրկանն հետ պտըտեր,
Գացի ըսի կամաց մը.
Աղւոր էրիկ չես առեր:
    Քաշուիլն ի՛նչ է, չեմ գիտեր,
    Մահն ի՛նչ է, չեմ սեպեր,
    Զի ամէն օր շարունակ,
    Ես սորված եմ ծեծ ուտել:

## 47. ՔԷԼԷ ՔԷԼԷ

Քէլէ, քէլէ, քելքիդ մեռնիմ,
Քո գովական խելքիդ մեռնիմ.
    Սիրաւոր լորիկ, վիրաւոր լորիկ,
    Լորիկ, սեւաւոր լորիկ, լորիկ ջան,
Քելդ քէլէ, սոյիդ մեռնիմ,
Քո չինարի բոյիդ մեռնիմ,
Քէլէ քէլէ, քօղիդ մեռնիմ,

Քո լուսնյայ շողիդ մեռնեմ,
Քո սիրունիկ ձենիդ մեռնիմ,
Քելէ քելէ, բերնիդ մեռնիմ,
Քելէ քելէ ձեռիդ մեռնիմ,
Քո հուր կրակ սերիդ մեռնիմ,
Քելէ քելէ աչիդ մեռնիմ.
Քո անուշիկ պաչիդ մեռնիմ:

## 48. ՄԱՆՈՒՇԱԿ

Սիրուն մանուշակ,
Ի՞նչու ես թոռմեր,
Կապոյտ աչերդ,
Ինչո՞ւ ես փակեր:
Քեզ ո՞վ մեղադրեց,
Քեզ ո՞վ բամբասեց,
Քո անուշ հոտով,
Քեզ ո՞վ զմայլեց:
Սիրուն, ո՞վ աղջիկ,
Ի՞նչու չես խօսեր,
Քո սիրուն ձայնով,
Ի՞նչու չես երգեր:
Քեզ ո՞վ մեղադրեց,
Քեզ ո՞վ բամբասեց,
Քո անուշ ձայնով,
Քեզ ո՞վ զմայլեց;



## 49, ԹԻԽԱՆ

Սակաւապետն երջանիկ չէ, թշուառ ալ չէ, տես ի՛նչ է,
Հանգիստ, առողջ, ազատ կ'ապրի. խաղաղ սրտով կը ննջէ
Նա հանոյից գերի չըլլար, հոգին մարմնոյն չի մատներ,
Ա՛յլ գիտէ որ կեանքը մարդուս փորձանք է զատ մի բան չէ։
Բնութեան բոլոր գաղտնեացն հմուտ ջերմեռանդով կը
[կրկնէ,
Այսօր փոքրիկ սխալմունք մը վաղը հոգիդ պիտի տանջէ
Սա ոչ միայն գրական մարդ է, միայնգաման հոգեկան.
Երբ սատանան դէմն ելլէ, խելքն օգնութեան կը կանչէ,
Տգէտն է որ ցոփութեան մէջ երջանկութիւն կ'երազէ,
Իսկ գիտունը ժուժկալութեամբ թշուառութիւնն կը ճնշէ
Անխելք մարդը կենաց ճամբան խոտոր կ'երթայ մինչ
[կորուստ.
Իսկ խելօքին փոյթ չէ, կարծես թէ գաբրիէլեան փողն
[հնչէ,
Իմաստակն ամէն յանցանք թող բընութեան վերագրէ,
Իմաստունը չի տարբերիր ամէն մէկ բան մը փունջէ,
Առաքինին մօր գրկէն զատ դպրոց չունի, ի՛նչ օգուտ,
Ամէն կոչեալ ընտրեալ չըլլար, ո՛վ ինչ կ'ուզէ բարբանջէ
Ատելիներդ թող հալածեն քեզ. փոյթ մ'ըներ ո՛վ երիտա-
[սարդ,
Դու զոհ եղիր հաւատքովդ, յոյս երազէ, սէր ճնշէ,
Երջանկութիւն, թշուառութիւն, ի՛նչ վերացեալ հոծ
[բառեր,
Անունը կայ, բայց ինք չիկայ, ո՞վ գներ, ո՞վ վաճառեր ...։

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ ԵՐԳԵՐՈՒ


Թիւ 1. Ադւոր աղջիկ էջ 3
» 2. Ահա մօտեցան » 3
» 3. Ահա սուրանդակ » 4
4. Սիրս հարը » 5
» 5. Արշալոյսը ծորէ. » 5
» 6. Իմ չինարի եարը » 6
» 7. Առտուն կանուխ » 6
» 8. Ալագեազ սարն. » 7
» 9. Հովուին երգը » 7
» 10. Բոյդ բարձր » 8
» 11. Գնա, գնա. » 9
» 12. Գիշեր ցերեկ. » 10
» 13. Դարդս լացէք » 10
» 4. Եւսզ » 11
» 15. Ես սարէն կու. » 11
» 16. Առաջին սէր » 12
» 17. Եար մը ունէի » 12
8. Լճի մէջ նաւակ » 13
» 19. Լուսնակ գիշեր » 14
» 20. Լէփօ լէ լէ » 14
» 21. Իմ ընտրածը » 14
» 22. Կուժն առայ » 15
» 23. Հոգւոյս հատոր » 15
» 24. Հով լինի » 16
25. Թիւ Հոլիւր սարին էջ 16
26. » Համեստ աղջիկ » 17
27. » Հոյ նար. » 17
28. » Հոյ նազան իմ » 17
29. » Հաբրբան » 18
30. » Խնկի ծառ » 19
31. » Մատաղ ըլլամ » 19
32. » Ճորորա » 20
33. » Որսկան աղբեր » 20
34. » Ուրտեղ սիրուն. » 21
35. » Չես հաւատում » 22
36. » Կաղ աղբիւրին. » 22
37. » Սարէն կուգայ » 23
38. » Սարերի հովին. » 24
39. » Ս[illegible]
40. » Սէր » 25
41. » Սիրունիս » 25
42. » Սօնա եար » 26
43. » Սարէն եկաւ » 27
43. » Սարը սարին » 27
45. » Սարերը հով ելա » 28
46. » Թերթեւսօլիկ » 28
47. » Փէլէ փէլէ » 29
48. » Մանուշակ » 30
49. » Թիւան » 31

ՅՈՒՆԱՀԱՅ ՄԵԾ ԳՐԱՏՈՒՆ

# ՀՈՐԻԶՈՆ

Օտօս մեղ. Ալեքսանտրիու թիւ 60
Գավալա — Յունաստան

*Կը հայթայթենք ամէն տեսակ պատմական, վիպական, գիտական, գրական, կրօնական, երգիծական, դպրոցական գրքեր, բառարաններ, ֆրանս. մեթոտներ եւայլն.*

Մեր նշանաբանն է
Ուղղամիտ եւ արագ գործունէութիւն։
Յանձնարարութիւնք միշտ կանխիկ։
Փորձեցէք եւ գոհ պիտի մնաք·

Դիմել ուղղակի մեր հասցէին.

*Mr. Léon DJérahian*
*Libraire „Horizon"*
*Gavalla (Gréce)*